

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ ԿԳՄՍՆ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

## Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝            Ձևավորող գնահատում: Հետադարձ կապի ուժը

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝            Վարդենիս Հ.Համբարձումյանի անվան  
ավագ դպրոց

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝    Հասմիկ Բեյբության

ՈւՍՈՒՑՉՈՒՀԻ՝                    Էլմիրա Հովհաննիսյան

ԴՊՐՈՑ՝                                Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոց

Վարդենիս 2022թ.

# Բովանդակություն

1. Ներածություն	3-4 էջ
2. Ձևավորող գնահատում: Հետադարձ կապի ուժը	5-6 էջ
3. Ձևավորող գնահատման բաղադրիչները	6-10 էջ
4. Դասի պլան	11-12 էջ
5. Բանավոր հարցում	13-14 էջ
6. Նոր նյութի հաղորդում	14-17 էջ
7. Դասի պլան	18-20 էջ
8. Եզրակացություն	21 էջ
9. Գրականություն	22 էջ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Էնշտեյնն ասել է «Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտատապի այն մտքից, որ ինքն անկարող է»:

Գնահատումը բազմաբնույթ եզրույթ է:

Կրթության բնագավառում յուրաքանչյուր մասնիկ միտված է երեխայի կրթվելուն և զարգացմանը: Այդպիսի օղակ է նաև գնահատումն իր տեսակներով (միավորային, խրախուսական): Գնահատումը աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ակտիվության, ինքնուրույնության, զարգացվածության, վարքի արժևորումն է: Գնահատումը սովորողների ուսումնական արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, կուտակելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության արդյունքները վերահսկելու գործընթացն է: Գնահատումն են չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացումը, սովորածը գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները, մտագործունեության մակարդակը: Գնահատականը գնահատման հետևանքն է. այն ավելի կոնկրետ է, բխում է ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների խորությունից, դրանց կիրառման արդյունքից: Հաշվառքը որոշակի ժամանակահատվածում՝ դասի, կիսամյակի, ուստարվա ընթացքում, ուսումնական գործունեության հանրագումարն է: Թվանշանը գնահատականի կոնկրետ արտահայտությունն է, ուսումնական նվաճումների մակարդակի արտահայտման պայմանական նիշը:

Գնահատման առաջին՝ երեքբայան համակարգը ծագել է Գերմանիայում: Գնահատականի բալային համակարգն առաջին անգամ ձևավորվել է Գերմանիայի միջնադարյան դպրոցներում: Յուրաքանչյուր բալը (միավորը) ցույց է տվել աշակերտների առաջադիմության կարգը մյուս աշակերտների համեմատությամբ I-ը՝ լավագույն, II-ը՝ միջին և III-ը՝ վատագույն: Հետագայում միջին կարգը, որին հավակնում էր աշակերտների մեծամասնությունը, լրացուցիչ բաժանվել է 3 դասի, որի արդյունքում առաջացել է 5 նիշային համակարգը, որից էլ օգտվել են խորհրդային դպրոցի ուսուցիչները:



## ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ: ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՈՒԺԸ:

Գնահատման հինգբայան համակարգն ընդունվել է 1944 թվականին և երկար տարիներ գործում էր նախկին ԽՍՀՄ հանրապետությունների կրթական համակարգում: 2008 թվականին կրթական բարեփոխումների համատեքստում ՀՀ հանրակրթության համակարգն անցավ գնահատման 10-բալային համակարգի. 10՝ բացառիկ, 9՝ գերազանց, 8՝ շատ լավ, 7՝ լավ, 6՝ միջինից բարձր, 5՝ միջին, 4՝ բավարար, 3՝ անբավարար, 2՝ վատ, 1՝ շատ վատ: Դրական են համարվում 4-10 միավորները: Հիմնական և միջնակարգ դպրոցում ավարտական քննությունների համար կիրառվում են նաև գնահատման այլ համակարգեր: Սպասվելիք փոփոխությունների արդյունքում բոլոր միավորները համարվում են անցողիկ:

Գնահատման 10-բալային համակարգն ապահովում է առարկայական չափորոշիչների և առարկայական ծրագրերի կատարումը, նպաստում է սովորողների ինքնազարգացմանը և ուսուցման գործընթացի որակի, արդյունքների բացահայտմանը:

Գնահատման սկզբունքներն են արդարությունը, հուսալիությունը, անկողմնակալությունը, հավաստիությունը, հիմնավորվածությունը, մատչելիությունը, թափանցիկությունը և այլն: Բացի նշված համակարգից կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային:

Գոյություն ունեն գնահատման 2 փոխկապակցված ձևեր՝ ձևավորող (ուսուցանող) և միավորային:

Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով\*(մանկավարժություն):

Առանց հայտորոշման ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա: Պահպանելով գնահատման

իրականացման հետևողականությունը՝ կարելի է հասնել ուսումնառության արդյունքների բարձր մակարդակի:

### **Ձևավորող գնահատման բաղադրիչները**

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում (Գծակարգ):

- Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:

- Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:

- Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

- Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:

• Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:



Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա: Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի հնարներով:

Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր ձևերի ու տեսակների հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:

- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:

- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:

- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

- ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում,

- սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,

- ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը:

Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին և այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

Առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ տարվա վերջում գրանցվում է սովորողի աճի բնութագիրը:

Ընթացիկ գնահատումը շարունակական տեղեկատվություն է ապահովում ուսուցման ընթացքն ուղղորդելու և ուսումնառության որակը բարելավելու համար:



Ընթացիկ գնահատումը լինում է երկու ձևի՝

1. Ուսուցանող (ձևավորող) գնահատում, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և ուղեկցվում է առաջադրանքի կատարման վերաբերյալ աշակերտին արված դիտողություններով, հետադարձ կապի ապահովմամբ: Ուսուցանող գնահատման համար երաշխավորվում են աշխատանքի հետևյալ տեսակները՝ տնային աշխատանքները, ինքնուրույն աշխատանքները, բաց հարցերով քննարկումները, ինքնագնահատումը, փոխադարձ գնահատումը, խմբային աշխատանքները և այլն:

2. Պարտադիր գրանցման ենթակա միավորային գնահատմամբ երաշխավորում են ստուգման հետևյալ տեսակները՝ բանավոր հարցում, թեմատիկ գրավոր աշխատանք, կիսամյակային ամփոփիչ աշխատանք, գործնական աշխատանք: Կիսամյակային գնահատականը ձևավորվում է ստուգման նշված տեսակներից նրա վաստակած գնահատականների հիման վրա:

Բոլոր ժամանակներում մանկավարժ գիտնականները փորձել են ուղիներ որոնել թվանշաններով գնահատական նշանակելուց, քանի որ բալային ոչ մի համակարգ չի կարող ստույգ արտահայտել աշակերտի ուսումնական գործունեության արդյունքների չափը, խորությունը, մակարդակը: Գնահատման թվանշանային համակարգի թերություններից են այն, որ ամփոփիչ գնահատականը հարաբերականորեն է արտահայտում յուրացված գիտելիքների չափը. սովորաբար կիսամյակային գնահատականը նշանակվում է մի քանի գնահատականների միջին թվաբանականի հիման վրա, որը ոչ թե բոլոր թեմաների իմացությունն է, այլ ընդամենը մի քանի դասանյութի: Գնահատականը կարող է սուբյեկտիվ լինել՝ արտահայտելով ուսուցչի դրական կամ բացասական վերաբերմունքը. հաճախ ուսուցիչը անտեղի բարձր է գնահատում աշակերտին՝ խրախուսելով նրան, և աշակերտը ավելորդ ինքնավստահություն է ձեռք բերում<sup>3</sup>: Հաճախ էլ որոշ ուսուցիչներ միտումնավոր ցածր են նշանակում աշակերտին. արդյունքում աշակերտը կորցնում է հետաքրքրությունն ուսման, հավատն իր ուժերի նկատմամբ: Գնահատականը երբեմն դառնում է կարգապահության ամրապնդման, ինչպես նաև պատժի միջոց: Քիչ չեն նաև ուսուցիչների վրա վերադասի կողմից ճնշումներ գործադրելու դեպքերը, առանձին աշակերտների հովանավորելու փաստերը: Ի վերջո գնահատականը չի արտահայտում

մտավոր ընդունակությունների, ինքնուրույնության, գործնական կարողությունների ձևավորվածության մակարդակը:

Առաջավոր շատ ուսուցիչներ կիրառում են վերահսկողության ինքնատիպ ձևեր: Օրինակ՝ Վ. Շապովալովը կիրառում էր գիտելիքների բաց հաշվառման թերթեր. ստացած յուրաքանչյուր գնահատական գրանցվում է հատուկ թերթում, որը փակցվում է պատին՝ համընդհանուր դիտման համար. դա ապահովում է հրապարակայնությունը և ունի դաստիարակչական ներգործություն: Աշակերտը ցանկացած ժամանակ կարող է ուղղել իր գնահատականը՝ ստանալով բարձր գնահատական, ցույց տալով իր առաջադիմությունը և հնարավորություն ունենալով դրական հեռանկարի: Ուշագրավ է նաև Շ. Ամոնաշվիլու փորձարարական հետազոտությունը: Ցածր դասարաններում երեխաներին գնահատականներ չեն նշանակվում. երեխաները ծնողներին և ուսուցիչներին հաշվետու են լինում իրենց ուսումնական աշխատանքի արդյունքներով: Կիսամյակի համար ցածր դասարանցիներին տրվում են բնութագրեր, որոնց մեջ նշվում են նրանց հաջողությունները կամ անհաջողությունները. ծնողների համար պատրաստվում են նաև հատուկ փաթեթներ, որոնք բովանդակում են երեխաների աշխատանքների նմուշներ: Կիրառվում է գիտելիքների գնահատման խոսքային-բնութագրական ձևը: Ուսուցման գործընթացում շեշտը դրվում է ուսումնական գործունեության դրդապատճառների և իմացական ակտիվության վրա\*\*\*:

# Դասի պլան

ՈՒՍՈՒՑԻՉ

Էլմիրա Հովհաննիսյան

Առարկան՝	Մաթեմատիկա	Ամսաթիվ	Կիսամյակ	Դասարան
Թեմա՝	Թվային արտահայտություններ			
Օգտագործվող նյութեր՝	Համակարգիչ, պրոյեկտոր և մեծ էկրան, առաջադրանքների թերթիկներ			
Դասի նպատակը՝	<ul style="list-style-type: none"> <li>• Ընկալել 1 - ը որպես համախմբի ամեն մի առանձին տարրի նշանակում այդ տարրերի քանակը հաշվելիս:</li> <li>• Իմանալ 1 – ով կատարվող թվաբանական գործողությունների հատկությունները և 1 – ի յուրահատկությունները:</li> <li>• Կարողանալ կատարել թվաբանական գործողություններ 1 – ով:</li> <li>• Ընկալել 0 թվի իմաստը: Իմանալ, որ 0 – ն բնական թիվ չէ, քանի որ հաշվման ժամանանակ չի հանդիպում:</li> <li>• Իմանալ 0 -ի համեմատումը բնական թվերի հետ , ինչպես նաև 0 – ի հատկությունները՝ կապված թվաբանական գործողությունների հետ :</li> <li>• Կարողանալ կատարել գործողություններ 0 թվով:</li> </ul>			
<b>Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն որ ուսուցումը տեղի ունեցավ</b>				
Վերջնարդյունքները	<p>Կատարել թվաբանական գործողություններ</p> <p><i>Դրանք կիրառել յուրանյութի իրավիճակներում, ավելի բարդ նմանատիպ վարժությունների լուծման ընթացքում</i></p>			
Գործողություններ ժամ/տևողություն	Ուսումնական գործնություն Աշակերտներ	Ուսուցիչ	Մեթոդներ	

Մուտք, ներկա- բացակա/3ր		Բարևում է աշակերտներին, ստուգում տնային	
Սկիզբ 5-7ր	Բացել դասագրքերը, պատրաստվել դասին:Ներկայացնել տնային աշխատանքները:	աշխատանքները , բացատրում անհասկանալի մնացած հարցերը:	Հարցադրումների մեթոդ
Ընթացք 25-30ր	Պատասխանում են ուսուցչի կողմից հնչեցրած հարցերին,հայտանիշները գրում տետրում և հնչեցնում հարցեր: 1-2 աշակերտ աշխատում են գրատախտակի մոտ , մնացած աշակերտները խմբերով լուծում են վարժությունները և խնդիրները միմյանց օգնելով:	Հարցերի միջոցով աշակերտներին հիշեցնում 1-ի և 0-ի հատկությունները	Խմբային աշխատանքների մեթոդ
Ավարտ 5ր	Ամփոփում են աշխատանքները		Խճանկարի մեթոդ
Տնային աշխատանք	Տնայինը հանձնարարվում է դասագրքից		

## ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ


Ուսուցիչը կազմակերպչական մասից հետո անցնում է բանավոր հարցմանը՝ հնչեցնելով հետևյալ հարցը.

Նախ՝ որտե՞ղ են բնական թվերը:

Աշակերտները հերթականությամբ դասամատյանի համարներով ներկայացնում են իրենց, որոնք կազմում են բնական թվերի շարքը:

Միաժամանակ քարտերի վրա գրված հարցերը ցուցադրվում էնաև սահիկաշարով:

### 1.ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ



Քարտերի վրա գրված են՝

- Որ թվերն են կոչվում բնական թվեր:
- Որ թվով է սկսվում բնական թվերի շարքը:
- Ինչպես են դասավորված թվերը:
- Ինչպես է որոշվում թե երկու բնական թվերից որն է ավելի մեծ և որն է ավելի փոքր:

- Ձեր կարծիքով 0 -ն և 1-ը ինչպիսի թվեր են:
- Թվերի համեմատման ինչ նշաններ են գործածվում:

Ինչպես են համեմատվում թվերը, որոնց գրառումներում տարբեր քանակներով գույգեր կան:

*Քարտերի վրա գրված հարցերը առանձին – առանձին աշակերտների*

*ցանկությամբ, մոտենում և վերցնում են ու հերթականությամբ*

*պատասխանում հարցերին : Միալների դեպքում կարող են այդ հարցերին*

*պատասխանել դասարանի մյուս աշակերտները : Այսպես ուսուցիչը*

*ամրապնդում է նախորդ դասից ձեռք բերված գիտելիքները, որոնք խթան*

*կհանդիսանան նոր նյութի յուրացման համար :*

## 2. ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

*Նոր նյութի հաղորդումն ուղեկցվում է սահիկահանդեսով:*



## ՆՅՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

1,Բացի 1 թվից ամեն մի բնական թիվ հաշվման արդյունք է

1 թվի յուրահատկությունն է ցանկացած առանձին վերցված առարկայի (միավորի)

նշանակումն է :

Օրինակ՝ Քարերի քանակի մեջ միավոր կարելի է համարել 1 քար

2. Ի տարբերություն մյուս բնական թվերի 1-ը բնական թվերի շարքում չունի իր նախորդող բնական թիվը, այն ամենափոքր բնական թիվն է :

1-ը յուրաքանչյուր թվով բազմապատկելիս և բաժանելիս ստացվում է նույն թիվը՝

$$a \cdot 1 = a \quad a : 1 = a$$

Իսկ 0-ն՝ ...

0 –ն նույնպես յուրահատուկ թիվ է

0 –ն բնական թիվ չէ, քանի որ հաշվելիս այն չի հանդիպում:

0-ն որևէ բանի բացակայության նշան է : Օրինակ՝ Եթե թվի որևէ կարգում գրված է 0, նշանակում է համապատասխան կարգային միավորը բացակայում է :

### **ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ**

Կատարել դասագրքում զետեղված վարժություններն ու խնդիրները :

Այնուհետև երկու առաջադրանք սահիկաշարի միջոցով կցուցադրվի էկրանին :

Յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար աշակերտներին շատ կարճ ժամանակ է տրվում:

# Առաջադրանքների կատարում



Առաջադրանքները հետևյալն են՝

- Որ թվերն են կոչվում բնական թվեր:
- Որ թվով է կսվում բնական թվերի շարքը:
- Ինչպես են դասավորված բնական թվերը:
- Ինչպես է որոշվում թե երկու բնական թվերից որն է ավելի մեծ և որն է ավելի փոքր:

փոքր:

- Թվերի համեմատման ինչ նշաններ են գործածվում:
- Ինչպես են համեմատվում թվերը, որոնց գրառումներում տարբեր քանակներով կարգեր կան:

կարգեր կան:

- Ձեր կարծիքով 0 և 1-ը ինչպիսի թվեր են:

## ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Անդրադարձ կատարել և դասն ամփոփել հարցերին պատասխանելով:

Գնահատել դասին մասնակցող աշակերտներին՝ հիմնավորելով նշանակած գնահատականը:

## ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ



Տնային աշխատանք հանձնարարել դասարանում կատարած վարժությունների նման վարժություններ:

## *Դասի պլան*

Առարկա	Մաթեմա տիկա	Ամսա թիվ	Կիսամյա կ	Դասարան
Խմբի բացվածք				
Թեմա՝	Բաժանելիության հայտանիշներ: Թվերի բաժանելիությունը 10-ի, 5-ի և 2-ի:			
Օգտագործվող նյութեր	Գրատախտակ, գիրք, տետր, կավիճ			
Դասի նպատակը՝	Իմանա թվերի 10-ի, 5-ի և 2-ի բաժանելիության հայտանիշները, գույգ և կենտ թվերը, ինչպես նաև նրանց հիմնավորումը: Հիմնվելով թվերի գրառման վրա՝ կարողանա կիրառի այդ հայտանիշները թվի բաժանարարները գտնելիս:			
Վերջնարդյունքներ	<p>Հասկանա թեմայի սահմանումները և այն կիրառի դասի ընթացքուկատարվելիք առաջադրանքներում :</p> <p>Կարողանա ցույց տա, որ եթե թիվը բաժանվում է 10-ի, ապա այն կբաժանվի նաև 5-ի և 2-ի:</p> <p>Դասից հետո աշակերտները կիմանան 10-ի, 5-ի և 2-ի բաժանելիության հայտանիշների սահմանումները՝ հիմնավորումներով:</p> <p>Դասից հետո աշակերտները կկարողանան ներկայացնել 10-ի, 5-ի և 2-ի բաժանելիության հայտանիշները օրինակներով: Մի խումբ թվերից առանձնացնել այն թվերը, որոնց բաժանարարներն են միաժամանակ 2-ը, 5,10-ը:</p>			

Գործողություններ ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող Մեթոդներ
<p>Մուտք 3 ր.</p> <p>Սկիզբ՝ 5 – 7 ր.</p> <p>Ընթացք՝ 25 – 30 ր</p>	<p>Պատրաստվում է դասին</p> <p>Աշակերտները հիշում են անցածը, պատասխանում հարցերին:</p> <p>Կազմում են 4-5 հոգանոց 3 խումբ և յուրաքանչյուրը ստանալով համապատասխանաբար իր առաջադրանքը, I-ը՝ 2-ի բաժանելիության, II-ը՝ 5-ի բաժանելիության, III-ը՝ 10-ի բաժանելիության հայտանիշները:</p> <p>Այնուհետև խմբի անդամները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները և արտահայտում իրենց մտքերը, ու միասին դուրս գրում եզրահանգումներ:</p>	<p>Բարևում է և ստուգում տնային աշխատանքները</p> <p>Մտազրոհ է ամուստալիս է հարցեր անցած դասի վերաբերյալ</p> <p>Ուսուցիչը Մտքերի տարափի միջոցով գաղափարներ է հավաքում հետևյալ հարցերի վերաբերյալ: Այնուհետև անցնում է բուն դասին:</p> <p>Ուսուցիչը վկայակոչելով մտազրոհով հավաքած պատասխանները և խթանման փուլում կատարված գրառումները, առաջարկում է կիրառել համագործակցային ուսուցման մեթոդը:</p>	<p>1. Ինչպես կարելի է երկու իրարից տարբեր թվեր բաժանել 2 _ ի:</p> <p>Ինչպիսիպայմանների պետք է բավարարի թիվը, որպեսզի այն բաժանվի 2-ի, 5-ի:</p> <p>Արդյոք 10-ի բաժանվող թիվը կբաժանվի և՛ 5-ի, և՛ 2-ի:</p>	<p>Մտազրոհ</p> <p>Խմբային աշխատանք</p> <p>Խճանկար</p> <p>Համագործակցային ուսուցում</p>

<p>Ավարտ 5- ր</p>	<p>Աշակերտներից մեկը տալիս է զույգ և կենտ թվերի սահմանումները, մյուսները՝ կատարում դասագրքում զետեղված վարժություններից օրինակներ:</p> <p>Կատարելով դասագրքում զետեղված հարցերը, վարժություններն ու խնդիրները, կատարում են ինքնուրույն եզրահանգումներ:</p> <p>Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը միջամտում է և տալիս բացատրություն:</p>			
<p>Տնային հանձնարարություն</p>	<p>Թեմային վերաբերող վարժությունների և խնդիրների հանձնարարում</p>			

## *ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ*

Ներկայումս կիրառվում են գնահատման նոր ձևեր, եղանակներ, որոնցից բավականաչափ արդյունավետ են ռուբրիկները (սանդղակ, սանդղակաշար): Ռուբրիկը հստակ սահմանում է սովորողի ուսումնական արդյունքների գնահատման չափանիշները: Այն կարող է կազմվել խմբային, անհատական, ընդհանուր աշխատանքները ստուգելու և գնահատելու համար՝ բնութագրելով աշակերտների մասնակցությունը, նյութի իմացությունը, ինքնուրույնությունը, ակտիվությունը, կարգապահությունը և այլն:

Սանդղակում գնահատման յուրաքանչյուր միավորի համար սահմանվում են պահանջները բնութագրող հստակ չափանիշներ: Ռուբրիկը կազմելիս որոշվում է, թե սովյալ միավորը գնահատման համակարգի որ աստիճանին է համապատասխանում: Ռուբրիկը ուսուցչին հնարավորություն է տալիս արդարացի և օբյեկտիվ լինել, իսկ աշակերտին՝ հստակ պատկերացնել, թե ինչ է գնահատվում, ինչ կարողություններ են պահանջվում որոշակի գործունեության իրականացման համար:

Գնահատումը պետք է լինի ճկուն և հոգեբանորեն հիմնավորված: Մանկավարժը պետք է կարողանա կանխատեսել գնահատման դրական և բացասական հետևանքները, դաստիարակչական արդյունքը, վայլեղոգիական և սոցիալ-հոգեբանական ներգործությունը: Գնահատումը պետք է նպաստի երեխաների համաչափ և համակողմանի զարգացմանը, ձևավորի ուսումնական դրդապատճառներ:

Գնահատման այլ ձևերի կիրառումը սկզբունքորեն հնարավոր է, սակայն դա պահանջում է աշակերտների, ծնողների և ուսուցիչների հոգեբանական պատրաստություն և կրթական նոր ռազմավարությունների մշակում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, - Եր., 2008. -9 էջ:

2. Մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար/Կազմեցին՝ Լ. Թ. Ասատրյանը, Գ. Հ. Հակոբյանը, Մ. Ա. Ասատրյանը, Մ. Մ. Գևորգյանը, Ն. Զ. Կարապետյանը, Ա. Ա. Բաղդասարյանը, -Եր.:Արտագերս, 2017, -360 էջ, 227- 237 էջեր:

3. Միքայելյան Օ. Ս., Միքայելյան Ս. Օ., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, - Եր., 2010, -45 էջ:

4. Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը /Աստվածատրյան Ա. և ուրիշներ,-Եր.:Այոքս, 2003,-336 էջ, 288-294 էջեր:

Ուսուցչի մասնագիտական գործունեության հիմունքներ:

Ուսումնամեթոդական ձեռնարկ /Կազմեց՝Գ. Հակոբյան,-Եր.:Արտագերս, 2019.-168 էջ, 162-147 էջեր:

\*Մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար/Կազմեցին՝ Լ. Թ. Ասատրյանը, Գ. Հ. Հակոբյանը, Մ. Ա. Ասատրյանը, Մ. Մ. Գևորգյանը, Ն.Զ. Կարապետյանը, Ա. Ա. Բաղդասարյանը, - Եր.:Արտագերս, 2017, -360 էջ, 227-237 էջեր:

\*\*Միքայելյան Օ. Ս., Միքայելյան Ս. Օ., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, - Եր., 2010, -45 էջ:

...Ուսուցչի մասնագիտական գործունեության հիմունքներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Կազմեց՝Գ.

Հակոբյան,-Եր.:Արտագերս, 2019.-168 էջ, 162-147 էջեր: